

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ 30-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՆՇՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Սրբազնագոյն Հայրապետի կաթողիկոսական ընտրութեան եւ օծման 30-ամեակին առիթով, Կիրակի, 15 Յունիս 2025-ի առաւօտեան ժամը 10:00-ին, Կաթողիկոսանիստ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուեցաւ եպիսկոպոսական Սուրբ եւ Ամմահ Պատարագ եւ կատարուեցաւ Գոհաբանական Աղօթք (Հայրապետական Մաղթանք): Պատարագեց ու յաւուր պատշաճի քարոզեց կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ գերշ. Տ. Շահան արք. Սարգիսեան:



Սուրբ Պատարագին ներկայ էին Կիլիկեան աշխարհացոյի թեմերու թեմակալ առաջնորդ սրբազան հայրերը, մեր Սուրբ Աթոռի Ազգային Կեդրոնական վարչութեան անդամները, թեմերու ազգային իշխանութիւններու, կուսակցութիւններու, բարեսիրական ու մշակութային միութիւններու եւ քոյր կազմակերպութիւններու վերին մարմիններու ներկայացուցիչները, ինչպէս նաեւ ազգային բարերար Ալէքս Պէգիբեան, զաւակն ու թոռը Զարեհ ու Անի Պէգիբեաններ:

Սուրբ Պատարագի մատուցման ընթացքին, «Տէրունական Աղօթք»էն անմիջապէս առաջ, Սուրբ Խորան բարձրացան Կիլիկեան ուխտեալ Միաբանութեան եպիսկոպոսաց դասէն խումբ մը միաբան հայրեր, գլխաւորութեամբ Կիպրոսի կաթողիկոսական փոխանորդ գերշ. Տ. Կոմիտաս արք. Օհանեանի: Անոնք աղօթք բարձրացուցին առ Աստուած մեր շնորհազարդ Հայրապետին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ

Կաթողիկոսի առողջութեան, արեւշատութեան եւ բեղուն ծառայութեան համար: Յիշեալ արարողութեան յաջորդեց պատարագիչ Շահան արքեպիսկոպոսի յաւուր պատշաճի քարոզը:



Անդրադառնալով մարդու կեանքի տարիներու 30 տարիքին, քարոզիչ սրբազան հայրը դիտել տուաւ, որ նոյնքան երիտասարդ է Հայրապետին գնացքը այսօր, որքան երբ առաջին անգամ ընթացք առաւ իբրեւ կաթողիկոս: Այս առումով, ան ընդգծեց Հայրապետին Արամեան Դպրոցը ըլլալը, երեք բառերով ներկայացանելով՝ տեսլիքի ու ծրագրերու մարդ, առաջնահերթութիւնները ճանչցող անձնաւորութիւն եւ իր խօսքը գործի վերածող իրագործումներու մարդ: Ան դիտել տուաւ, որ Վեհափառ Հայրապետին գահակալութեան 30 տարիները ունեցան իրենց մարտահրաւրդները, այսուհանդերձ ան Տիրոջ օրհնութեամբ մնաց վճռորոշ եւ ունեցաւ իր խօսքը, որ թարգմանեց գործով: Նորին Սրբութիւնը հակառակ մարմնեղէն տարիքի տարբերութեան, 30 տարեկան երիտասարդի խանդով, աւինով, ուժականութեամբ կը շարունակէ իր ծառայութիւնը, ընդգծեց սրբազան հայրը:

Սուրբ Պատարագի աւարտին, հայրապետական թափօրը ուղղուեցաւ վեհարանի դահլիճ, ուր Դպրեվանքի սաները Վեհափառ Կաթողիկոսին ծօնուած փունջ մը երգերով Հնորհաւորեցին անոր գահակալութեան 30-ամեակը:

TIKTOK-ԷՆ ՏԱՃԱՐ ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

ԴՊԿՏ. ԶՐԱԶ ԶԻԼԻՆԿԻՐԵԱՆ

Այս արագափոխիչ եւ աղմկալից ժամանակներուն, երբ մարդը կը խեղդուի իմաստի բացակայութեան մէջ, կը կորսնցնէ իր ինքնութիւնը, իսկ հոգին կը մնայ կարօտ մխիթարութեան, Ամերիկայի եւ Եւրոպայի մէջ սկսած է նկատուիլ անակնկալ երեւոյթ մը: Ուսումնասիրութիւններու համաձայն, մոր սերունդը մը՝ ժամանակակից աշխարհի դատարկութենէն յոգնած, սկսած է դառնալ դէպի այն, ինչ մոռցուած կը համարուէր՝ ւաւերական



եկեղեցին: Աւանդութեան մէջ անոնք կը վերագտնեն կորուսեալ խաղաղութիւն մը եւ մոռցեալ մօտեցում կը ցուցաբերեն Կաթողիկէ եւ Ուղղափառ եկեղեցիներու խորհուրդին, հոգեւոր ներհայեցող եւ ինքնամփոփ կարգապահութեան ու սրբութեան:

Catholic Herald-ի մէջ հրապարակուած յօդուած մը կը նշէ. «Ոչ միայն գոթական տաճարներու կամ լատին պատարագի փակ շրջանակներու մէջ, այլեւ երիտասարդ ամերիկացիներու սրտերուն մէջ, որոնք, մշակութային բոլոր հոսանքներուն հակառակ, հոսանքն է վեր կը թիաւարեն դէպի Կաթողիկէութիւն: Այս երեւոյթը տարակուսանքի կը մատնէ թէ՛ աշխարհիկ վերմախաւերը, եւ թէ՛ ազատամիտ բողոքականները: Ինչպէ՞ս կարելի է, քայքայումի եւ թուային ոչնչապաշտութեան (nihilism) այս դարաշրջանին, կարգ ու կանոնի, ծեսի եւ խոստովանութեան եկեղեցին ընկալել իբրեւ «գրաւիչ» (cool):»

Այս սերունդը, որ ժառանգած է ոչ թէ իմաստ, այլ ալկոհիթմեր՝ նախատեսուած գուշակելու մոր սերունդին քայլերը՝ առանց ընթերցելու անոր հոգիին խորութիւնը, այսօր կ'ապրի հոգեւոր սովի մէջ: Ազնուութեան, աղօթքի եւ խորհրդաւոր

լուծութեան փոխարէն, անոնց տրուած է անզգայացմող «TikTok-բուժում» մը՝ աւելի բթացմող քան մխիթարող: Եւ երբ հոգաւորութեան անումով կը վաճառուին «ինքնասիրութեան» մեթոտներ՝ փափուկ բառերով եւ մշուշոտ խոստումներով, շատերու մէջ ծնունդ կ'առնէ խոր եւ անբացատրելի պակաս մը, ներքին բաւարարութեան մը փնտռութիւնը, որ ոչ մէկ պայծառ էքրան կրնայ լեցնել:

Թուային աշխարհը այսօր վերածուած է միջոցի մը, որ անցած է մարդկային բարոյականութեան սահմանները, ուր ատելութիւն, բամբասանք, հայիյայանք, մակերեսայնութիւն եւ կեղծիք ոչ միայն նսեմացուցած են մարդուն բարոյական գիտակցութիւնը, այլ նաեւ աղաւաղած մարդկային էութիւնը: Այս աշխարհին շլացուցիչ գրաւչութիւնը մեզ սորվեցուցած է բաւարարուիլ մակերեսային գեղեցկութեամբ, արուեստական բաւարարութեամբ եւ անցողիկ զգացումներով, որոնք կու գան ու կ'անհետանան կայծակնային արագութեամբ: Բայց այս փայլքը ժամանակաւոր կրկներկոյթ (mirage) մըն է: Այսօրուայ մարդը՝ մանաւանդ երիտասարդը, զգայուն է այս դատարկութեան ճշմարտութեան նկատմամբ: Ան կը զգայ, որ հոգին սոված է, արմատները՝ կտրուած: Ու այսպէս, ի վերջոյ, ինչ որ կը փնտռէ՝ զուարճանք կամ վայրկեանական հաճոյք չէ, այլ իմաստ մը, որ չի խամրիր:

Եւ ահա ինչ կը սկսի բացուիլ ուղի մը՝ ոչ դէպի մորտութիւն, այլ դէպի մոռցուած արմատները. դէպի ւաւերութիւն, դէպի հաւատք, դէպի այն հոգեւոր ժառանգութիւնը, որ տարիներ շարունակ լոյսը պահած էր լուծութեան մէջ: Թուային աշխարհը, որ ժամանակ մը հաւատքը փոխարինելու մեծխօսիկ յաւակնութիւնը ուներ, այսօր ինք կը բացայայտէ իր անլուծելի փայլուն կեղեւ մը առանց հոգիի: Թուային աշխարհը չի ճանչնար լուծութեան խորութիւնը, եւ չի կրնար տալ այն մխիթարութիւնը, որ միայն հաւատքին խորքէն կը բխէ: Ժամանակն է, որ եկեղեցին վերադառնայ իր իսկական կոչումին, ոչ որպէս կառոյց, այլ որպէս բարեխոյս սիրտ:

Ինչպէս եղիշէ արք. Դուրեան, պատրիարք Կոստանդնուպոլսոյ (1909-1911) եւ ապա Երուսաղէմի (1921-1930), ըսած է՝ «[Եկեղեցին] զոր ոչ փայտակերտ աղօթարանի եւ ոչ քարաշէն տաճարի նիւթական նշանակութեամբ կ'իմանանք, այլ կ'ըմբռնենք մանաւանդ այն եկեղեցին՝ որ «սեպիական ժողովուրդ» կը քարգանաւոր:»

Մարդը որքան կարիքը ունի հոգեղէն մաքրումի, յոյսի եւ լոյսի բաներ, որոնք այսօրուան քաղաքական ժխտին մէջ, աշխարհը չի կրնար տալ այլեւ: Այս օրերուն, երբ կարծեք մեզի հասած աշխարհը կը կքի իր իսկ ստեղծած հիմքերուն տակ, եկեղեցին կոչուած է վերագարթեցելու՝ ոչ որպէս անցեալի շքեղ յուշարձան, այլ որպէս ներկայի կենդանի աղբիւր: Աղբիւր մը, որուն ջուրերէն կը հոսին սէր եւ ճշմարտութիւն: Աղբիւր, ուր Աստուած կը սպասէ հայրական հոգատարութեամբ: Եւ երբ երիտասարդը կը տեսնէ, թէ այս լոյսը դեռ չէ մարած, չի մօտենար որպէս ծանրորդ ու զբօսաշրջիկ, այլ որպէս զաւակ, որ երկար թափառումէ ետք իր տունը կը վերադառնայ:

«Տարբերակ 21»

ՓԱՓԿԱՎԱՐԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԵՐԵՔ ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹԵԱՆՑ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒՆ

Շարունակուած էջ 1-էն

Առաջնորդարան կը գտնուի նշանաւոր Թիլէ պողոտային վրայ, մեր Կիլիկեան ճեմարանէն հազիւ հարիւր մետր անդին: Կողքին՝ մայր եկեղեցին է եւ «Իման» կոչուած համայնքային դպրոցը:



Գերապայծառն է հետ մեր զրոյցը թաւալեցաւ Զմմառու վանքին եւ Դոմի Լեւոնեան քահանայապետական հայ վարժարանի սաներուն եւ ընծայեալներուն շուրջ, մանաւանդ որ Միրիաթեան արքեպիսկոպոս վերջերս մատակարար նշանակուած է այս վերջնոյն: Ան մեզի նուիրեց կարտինալ Աղաճանեանի մասին գիրք մը:

ԲԵՐԻՈՅ ԶԱՅՈՑ ԹԵՍԻ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻՆ ՄԷՋ

Սկզբունքով, մեր անդրանիկ այցելութիւնը պէտք է տայինք ինչ՝ Հայ առաքելական համայնքի առաջնորդարանին: Սակայն նկատուի ունենալով որ առաջնորդ Մակար արքեպիսկոպոս Ամբիլիաս մեկնած էր ժողովական պարտաւորութիւններով, ուստի, Բերիոյ Թեմի կեդրոն մեր այցը յետաձգուած էր ակամայ:



Երեքշաբթի, 17 Յունիսի առաւօտուն է որ իր գրասենեակին մէջ ողջունեցինք գերշ. Տ. Մակար արք. Ազգաբեանը, որ մեզի պէս... լիբանանցի է: Ըսուեցաւ, թէ այս պարագան անմախքն էր. Բերիոյ Թեմի ընտրեալ առաջնորդները, 60-ականներէն ասոյին, միշտ եղած են բնիկ հաւաքիչներ: Վերջին առաջնորդները՝ Գաթարոյեան սրբազան (վերջերս վախճանած) եւ Շահան սրբազան (այժմ մատենադարանապետ Ամբիլիասի) իրենց երկարամեայ պաշտօնավարութեամբ շատ խորունկ հետքեր թողած են Հաւաքի մէջ: Իսկ Մակար սրբազանը այնքան մեծ նուիրումով ու անխնայ ծառայութեամբ կը սպասարկէ գաղութին՝ որ ոչ ոք կը մտաբերէ անոր լիբանանցի ըլլալը...: Ան դարձած է հարազատ հաւաքի մը ու առաջին իսկ օրէն գրաւած է իր հօտին սիրտը:

Սրբազան հօր հետ խօսեցանք համայնքը յուզող հարցերու մասին: Զրոյցին ներկայ եղաւ Ազգային վարչութեան ատենապետ արն. Ժիրայր Ռէիսեան, որ անցեալին անդամ եղած է սուրիական խորհրդարանին եւ երկար տարիներ ալ վարեր է Ազգ. Սահակեան վարժարանի (այժմ փակուած) տնօրէնի պաշտօնը:

Մակար սրբազան մեզի նուիրեց իր հրատարակած գիրքերէն վեցեակ մը օրինակներ: Անոնցմէ մէկուն անդրադարձեր էինք «Արարատ»-ի էջերուն մէջ, տակաւին քանի մը շաբաթ առաջ:

Հայ համայնքապետներուն տրուած մեր այս այցելութեանց ընթացքին մեզի ընկերակցեցան Կիլիկեան Երջանակի մեր ընկերներէն Զրանդ Աթարեան, Զրաչ Գեորգեան եւ ժագ Սնունու:

Նշենք նաեւ, թէ մեր այս այցելութեանց պատշաճօրէն արձագանգեցին երեք համայնքներու դիմատետրի կայքէջերն ալ:

ՆԱՄԱԿԱՆԻ

Կու գամ խորին Հնորհակալութիւնս յայտնել Լիբանանի «Արարատ» թերթի խմբագրին՝ 2025 թուականի Յունիս 3-ին «ՆԵՂՈՍԵՆ ՄԻՆՉԵՒ ՕՆԹԱՐԻՕ ԼԻՃ» հատորիս վերաբերեալ «ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԸ» խորագրով «ԱԿ» ռատիոկայանի տիկին Շաքէ Մանկասարեանի գրախօսականին տեղ յատկացնելու համար: Կը խնդրեմ ծանուցել նաեւ, թէ հատորին անգլերէն տարբերակը անվճար կրնամ ուղարկել PDF հարթակով բոլոր փափաքողներուն դիմելով հետեւեալ հասցեին՝ hradpol@gmail.com:

Յարգանքներով
ԶՐԱՏ ԲՈՒՏԵԱՆ